Շտկված Արձանագրություն N 4

<<ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/3>> *ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*

Ք. Մեծամոր **30. 03. 2022թ.**

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար ***մարդատար մեքենայի*** *ձեռքբերման նպատակով հայտարարված* ***ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/3*** *ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝*

ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 *ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից՝* ***ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի*** *կողմից ներկայացրած հայտում առկա էին անհամապատասխանություններ՝ Հավելված 1-ում՝ բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը և տեխնիկական բնութագրում հստակեցված չէր* ***մարդատար մեքենայի*** *ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը, ինչպես նաև հայտի ապահովումը:*

28.03..2022 *թվականին մասնակցին տրվել էր մեկ /1/ աշխատանքային օր, անհամապատասխանությունը շտկելու համար:* ***ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի*** *կողմից ամբողջությամբ չի կատարվել գնահատող հանձնաձողովի կողմից կայացրած որոշմամբ անհամապատասխանությունների շտկումը, մասնավորապես չի ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով և հրավերով պահանջվող հայտի ապահովումը:*

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի ***45-րդ կետի***, ***ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/3*** *ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից՝*

ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ–ի *հայտը ենթակա է մերժման,* ***5*** *աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը կուղարկվեն Լիազոր մարմին՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:*

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/3 *ծածկագրով գնման ընթացակարգի* ***1-ին*** *չափաբաժինը համարվում է չկայացած, քանի որ մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժվել է, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գնման ընթացակարգը* ***1-ին*** *չափաբաժնի մասով հայտարարվում է չկայացած:*

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Աշխատակազմի քարտուղար *Մ. Հովհաննիսյան*

Հանձնաժողովի անդամներ՝

Համայնքի ղեկավարի խորհրդական *Գ. Խուրշուդյան*

Գլխավոր մասնագետ *Է.Մարկոսյան*

Քարտուղար՝

Գլխավոր մասնագետ *Ն. Հակոբյան*